ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբեր - Հոկտեմբեր 2021



Հ -21

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՎՐԱ----------2

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ

և ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ. ԱՄՓՈՓ

ՏՎՅԱԼՆԵՐ----------3

ԱՐԴՅՈ՞Ք ՀՈՐՄՈՆԱԹԵՐԱՊԻԱ ԱՆՑՆՈՂ

ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒԱԼ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ ՔՈՎԻԴ-19-Ի ԴԵՄ----------4

«ԼԳԲՏԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՒԺԸ» ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ----------5

ԻՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ----------7

ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ. ՀԱԿԱԳԵՆԴԵՐԱՅԻՆ

ՀՈԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԸ----------8

ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ----------10

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՌԱՍԻԶՄԻ և

ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՆԱԶՆԱԺՈՂՈՎԻ (ՌԱԵՀ)

ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ՍԵՄԻՆԱՐԻՆ:----------11

ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ «ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԸ----------12

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՎՐԱ

Սույն թվականի սեպտեմբերի չորսի լույս հինգի գիշերը, ժամը 3.30-4.00-ի սահմաններում անհայտ անձը, մոտենալով Երևանի քաղաքապետարանի դիմացի այգու տարածքում նստած Գ. Կարայանին և նրա տրանսգենդեր ընկերուհուն, սպառնացել է, որ եթե տրանս կին Գ. Կարայանը սեռական հարաբերություն չունենա նրա հետ, նա կծեծի և կդանակահարի տրանս կնոջը: Գ. Կարայանը խնդրել է իրենց հանգիստ թողնել և հեռանալ, այլապես կդիմի ոստիկանություն, սակայն տվյալ անձը, քաշքշելով Գ.-ին, ստիպել է իր հետ գնալ: Տրանս կինը, տեսնելով, որ այլ ելք չկա, խնդրել է ընկերուհուն, որ նա շտապ զանգահարի ոստիկանություն կամ մոտակաքում գտնի պարեկային ոստիկաններին, ովքեր կօգնեն իրենց:

Քաշքշելուց հետո տվյալ անձը հարձակվել է տրանսգենդեր ակտիվիստ Գ.Կարայանի վրա՝ մարմնի տարբեր մասերին հասցնելով դանակի մի քանի հարվածներ՝ վնասելով ոտքը և ուսը: Գ. Կարայանը, մի կերպ փախչելով բռնարար տղամարդու ձեռքերից, գնացել է ոստիկանության Արաբկիրի բաժին՝ հանցագործության վերաբերյալ հաղորդում ներկայացնելու:

Ըստ Գ. Կարայանի պատմածի, ոստիկանությունը ոչ մի բան չի ձեռնարկել գտնելու հանցագործին, ավելին, խտրականցրել է տրանսգենդեր կնոջը՝ ենթարկելով ծաղրանքների:

Գ. Կարայանի դիմումի համաձայն՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի իրավաբանական բաժինը զբաղվում է տվյալ դեպքով: Գործի ընթացքի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն կարող եք ստանալ՝ հետևելով մեր նորություններին:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ և ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ



«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, կարևորելով Տրանսգենդեր և ԼԳԲԻՔ անձանց մտավոր և հոգեկան առողջությունը, միևնույն ժամանակ ձգտելով նվազեցնել խարանը և խտրականությունը նրանց նկատմամբ ու ապահովվել անդորրը համայնքի անդամների ընտանիքում, մեկ տարվա ընթացում հոգեբանական աջակցություն է տրամադրել շուրջ 259 անձանց, որոնցից.

42-ը դիմել են ընտանիքում բռնության ենթարկվելու պատճառով:
9-ը դիմել են զուգընկերոջ կողմից պարբերաբար բռնության ենթարկվելու պատճառով:
32 անձ դիմել է գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության հետ կապված խնդրով:
4-ը դիմել են վատ սովորությունների վերացման խնդրով:
21տրանսսեքսուալ անձ դիմել է հորմոնաթերապիայի արդյունքում առաջացած մի շարք խնիրների լուծման համար:
23սեքս աշխատողներ դիմել են հանցախորդների կողմից պարբերաբար բռնության, նվաստացումների, խարանի և խտրականության ենթարկվելու պատճառով:
13ԼԳԲՏԻՔ անձանց ընտանիքի անդամներ դիմել են ընտանեկան հարաբերությունները կարգավորելու, իրենց երեխաների և ընտանիքի այլ անդամների հետ խնդիրները հարթելու խնդրով:
Կազմակերպության 7 աշխատակիցները և խորհրդի 5 անդամները դիմել են մասնագիտական այրումը կանխարգելելու և վերականգնվելու խնդրով:
15անձ դիմել է միջանձնային հարաբերություններում խնդիրները կարգավորելու, հաղորդակցման դժվարությունները հաղթահարելու խնդրով:
11 անձիք դիմել է կարիերայի կառուցման, մասնագիտական կողմնորոշման խնդրով:
7անձ դիմել է ինքնագնահատականի բարձրացման, անվստահության, թերարժեքության բարդույթների հաղթահարման խնդրով:
42 անձ դիմել է տագնապ, վախ, ֆոբիա հաղթահարելու խնդրով:
7 անձ դիմել է մինչամուսանական խնդիրների լուծման համար:
11 անձ դիմել է աշխատանքային սթրեսի հաղթահարման խնդրով:
15 անձ դիմել է տարիքային ճգնաժամերի հաղթահարման խնդրով:

Ներկայումս հոգեբանական աջակցության ծրագրի ֆինանսավորումն ավարտվել է, սակայն հույս ունենք, որ այն կկրի շարունակական բնույթ և մեր շահառուներին հնարավորություն կտա բարելավել իրենց կյանքի որակը՝ հետզհետե տեսանելի փոփոխություններ մտցնելով իրենց որոշումներում և վարքի դրսևորումներում:

ԱՐԴՅՈ՞Ք ՀՈՐՄՈՆԱԹԵՐԱՊԻԱ ԱՆՑՆՈՂ ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒԱԼ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ ՔՈՎԻԴ-19-Ի ԴԵՄ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը պաշտոնական հարցում էր ուղղարկել ՀՀ առողջապահության նախարարություն պարզելու՝ արդյո՞ք տրանսսեքսուալ անձինք, որոնք անցնում են հորմոնաթերապիա, կարող են պատվաստվել ՔՈՎԻԴ-19-ի դեմ, և ինչպիսի՞ կողմնակի ազդեցություն կարող է պատվաստանյութն ունենալ:

Ի պատասխան մեր հարցման՝ ՀՀ առողջապահության նախարարությունը պատասխանել է.

«Ի պատասխան Ձեր 06.09.2021 թվականի հարցման, տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում իմունականխարգելման գործընթացն այդ թվում՝ պատվաստումների հակացուցումները, կանոնակարգվում և վարվում են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի N21-Ն հրամանի պահանջների:

Հայաստանում կորոնավիրուսային հիվանդության դեմ կիրառվող կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումները նույնն են, ինչ բոլոր պատվաստումների դեպքերում:

Պատվաստումների միակ բացարձակ հակացուցումը տվյալ պատվաստանյութի նախորդ դեղաչափից առաջացած անաֆիլաքսիան է:

Պատվաստման ժամանակավոր հակացուցումներն են սուր հիվանդությունները՝ միջին և ծանր ընթացքով, ինչպես նաև քրոնիկ հիվանդությունների սրացումը:

Միաժամանակ, Ձեր նշած տրանսսեքսուալ անձինք, ովքեր ստանում են հորմոնոթերապիա, պատվաստման հակացուցում չէ: Նրանք կարող են պատվաստում ստանալ պահպանողական թերապիայի ներքո, այսինքն առանց ընդհատելու դեղի օգտագործումը»:

Տրանսգենդեր համայնքի բոլոր ներկայացուցիչներին խորհուրդ ենք տալիս պատվաստվել, քանի որ պատվաստումը կարող է օգնել մեզ խուսափել տարատեսակ բարդացումներից, պաշտպանել մեզ և մեր ընտանիքի անդամներին:

Հարգանքներով՝

ԻԿ ԻՀԿ թիմ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15.09.21 № 01/05/14600-21

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ ՆԱԽԱԳԻՀ
ՏԻԳՐԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Լիսիցյան

Ի պատասխան Ձեր 06.09.2021 թվականի հարցման, տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում իմունականխարգելման գործընթացն, այդ թվում պատվաստումների հակացուցումները, կանոնակարգվում և վարվում են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի N21-Ն հրամանի պահանջների:

Հայաստանում կորոնավիրուսային հիվանդության դեմ կիրառվող կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումները նույնն են, ինչ բոլոր պատվաստումների դեպքերում:

Պատվաստումների միակ բացարձակ հակացուցումը տվյալ պատվաստանյութի նախորդ դեղաչափից առաջացած անաֆիլաքսիան է:

Պատվաստման ժամանակավոր հակացուցումներն են սուր հիվանդությունները՝ միջին և ծանր ընթացքով, ինչպես նաև քրոնիկ հիվանդությունների սրացումը:

Միաժամանակ, Ձեր նշած տրանսսեքսուալ անձինք, ովքեր ստանում են հորմոնոթերապիա, պատվաստման հակացուցում չէ: Նրանք կարող են պատվաստում ստանալ պահպանողական թերապիայի ներքո, այսինքն առանց ընդհատելու դեղի օգտագործումը:

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԻԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ՏԻՄԱՎԱՆ՝

RightSide

«ԼԳԲՏԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՒԺԸ» ՀԱՆՐԱՑԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI) ֆինանսական աջակցությամբ, կազմակերպում է ուսուցողական հանրային արշավներ ՀՀ տարբեր մարզերում և Երևանում բնակվող Տրանս ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչների համար՝ բարձրացնելու նրանց իրազեկվածության մակարդակը ատելության խոսքից, ատելության հիմքով հանցագործություններից և խտրականությունից պաշտպանվելու մեխանիզմների վերաբերյալ: Հանրային արշավները կազմակերպվում են «Փոփոխության ձայնը» երիտասարդական ակադեմիայի մասնակիցների կողմից, ովքեր իրենց ստացած գիտելիքներով և հմտություններով կիսվում են համայնքի ներկայացուցիչների հետ, նպաստում են նրանց՝ երիտասարդական աշխատանքների և քաղաքացիական ակտիվիզմի մեջ ներգրավվելուն:

2021 թվականի սեպտեմբերի 6-ին տեղի ունեցած հանդիպմանը մասնակցում էին թվով 10-ը ԼԳԲՏԻՔ+ անձինք և համախոհներ: Հանդիպումը տեղի ունեցավ Երևանի զբոսայգիներից մեկում, որի ընթացքում մասնակիցները քննարկում ունեցան ֆեմինիստական շարժման վերաբերյալ: Նրանք ներկայացրին, թե ինչ է իրենց համար ֆեմինիզմը և ինչու պետք է ֆեմինիզմն աշխարհում առաջատար շարժումներից մեկը լինի, այնուհետև մասնակիցները կատարեցին փոքրիկ գործնական աշխատանք, որի արդյունքում ներկայացրին իրենց հայտնի ֆեմինիստների ակտիվիստական գործունեության մասին, խոսեցին նաև Հայաստանում ֆեմինիստական շարժման մեջ տրանսգենդեր անձանց ներգրավվածության և դրա կարևորության մասին: Հանդիպման ավարտին մասնակիցները կիսվեցին իրենց տպավորություններով և ցանկություն հայտնեցին, որպեսզի նմանատիպ հանդիպումները շարունակական բնույթ կրեն:

Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցած հանդիպմանը մասնակցում էին Տրանս ԼԳԲԻՔ համայնքի թվով 11 ներկայացուցիչներ, որոնք Երևան էին ժամանել ՀՀ տարբեր մարզերից: Հանդիպման ընթացքում մասնակիցները՝ բաժանվելով խմբերի, կատարեցին գործնական աշխատանք, որի արդյունքում ներկայացրին այն խնդիրները, որոնց բախվում են իրենց առօրյա կյանքում, մասնավորապես՝ հասարակության կողմից խարանի և խտրականության և ընտանեկան բռնության դեպքերը, առողջապահական, կրթական և իրավական համակարգերի բացերը: Մարզաբնակ համայնքի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին հանդիպմանը իրենց ներգրավվելու համար, առաջարկեցին, որ նմանատիպ միջոցառումներն անցկացվեն նաև մարզերում՝ ավելի շատ անձանց ներգրավվելու համար:

Շարունակելով հանդիպումների շարքը՝ սեպտեբերի 13-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն անցկացրեց ևս մեկ հանդիպում՝ Երևանից և մարզերից ժամանած ԼԳԲՏԻՔ+ համայնքի այն ներկայացուցիչների համար, որոնք երբևէ չէին մասնակցել նմանատիպ միջոցառումներին: Մասնակիցներն ընդգծեցին, որ ցանկանում են ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն ստանալ, սակայն, գենդերային ինքնության հիմքով խտրականության, ծաղրանքների և բռնության պատճառով հաճախ չեն կարողանում:

#CFLIforEquality #LGBTIQPeerPower

Ակադեմիային մասնակցած ակտիվիստները կիսվեցին իրենց փորձով և պատմություններով, մասնակիցներին հորդորեցին երբեք չվախենալ և շարունակել պայքարել՝ հանուն իրենց բարեկեցիկ ապագայի: Հանդիպմանը ներկա էր նաև «Իրավունքի կողմ» ՀԿ-ի ծրագրերի ղեկավարը, ով ներկայացրեց ՀԿ-ի կողմից մատուցվող ծառայությունները (ինչպիսիք են կրթական դասընթացները, համակարգչային և անգլերենի դասընթացները) և մասնակիցներին խրախուսեց (հնարավորության դեպքում) օգտվել ծրագրերից:

Սեպտեմբերի 17-ին բուլինգի թեմայով կազմակերպված հանդիպում-քննարկմանը ներկա էին Տրանս ԼԳԲԻՔ համայնքի թվով 10-ը ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում մասնակիցները կիսվեցին ուսումնական հաստատություններում իրենց գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության հիմքով իրենց հետ պատահած խարանի և խտրականության դեպքերով, խոսեցին նաև բռնության և ատելության հիմքով հանցագործությունների մասին: Տարիներ շարունակ ենթարկվելով հոգեբանական ծանր ճնշումների՝ մասնակիցներից երեքը նշեցին, որ այդպիսի դեպքերի պատճառով նրանք դադարեցրել են իրենց ուսումը և չեն ցանկանում շարունակել: «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն, հավաքագրելով բոլոր բարձրաձայնված դեպքերը, մասնակիցներին առաջարկեց օգտվել կազմակերպության կողմից տրամադրվող կրթական ծրագրերից, իրավաբանական և հոգեբանական աջակցությունից: Քննարկման ավարտին մասնակիցների միջև անցկացվեց փոքրիկ խաղ, որի ընթացքում ներկա գտնվողները բարձրաձայնում էին իրենց բնորոշող հատկանիշները և փորձում էին հասկանալ, թե ինչպես կարող են ներգրավված լինել ակտիվիզմի և շահերի պաշտպանության մեջ: Ակադեմիային մասնակցած համայնքի անդամներն էլ խոստացան օգնել և առաջնորդել նրանց՝ իրենց գործունեության ընթացքում:

Իսկ արդեն սեպտեմբերի 28-ին երիտասարդական ակադեմիայի մասնակից Վահե Բաբայանն իրականացրեց հանդիպում-քննարկում՝ ներգրավվելով 10-ը Տրանս և ԼԳԲԻՔ անձանց ՀՀ տարբեր մարզերից և մայրաքաղաք Երևանից: Հանդիպման թեման էր ընտանեկան բռնությունը: Ակադեմիայից ստացած գիտելիքները Վահե Բաբայանը փոխանցեց հանդիպմանը ներկա գտնվող մասնակիցներին՝ վեր հանելով մի շարք խնդրիներ, որոնց գրեթե ամեն օր բախվում են Տրանս ԼԳԲԻՔ անձինք իրենց ընտանիքներում: Մասնակիցները ստացան այնպիսի գիտելիքներ, որոնք հետագայում կօգտագործեն իրենց ընտանիքներում խարանը և խտրականությունը նվազեցնելու համար: Հանդիպման ավարտին մասնակիցները գրեցին անհատական պատմություններ՝ «Իմ ելը» վերնագրով, որոնք հետագայում կներառվեն անհատական պատմությունների գրքույկում: Հանդիպման ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին Վահե Բաբայանին նմանատիպ հանդիպում կազմակերպելու և սույն ծրագրում իրենց ներառելու համար:

#CFLIforEquality
#LGBTIQPeerPower

ԻՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Սույն տեսանյութը պատմում է Հայաստանում բնակվող սեքս աշխատող համայնքի նկատմամբ խարանի ու խտրականության դեպքերի եւ նրանց կարիքների մասին:

Սույն տեսահոլովակը պատկանում է «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը:
Տեսահոլովակում օգտագործված երաժշտությունը չի՛ պատկանում կազմակերպությանը:
© «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն



ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ. ՀԱԿԱԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀՈՌՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2021թ.-ի հոկտեմբերի 4-ից 8-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել էր դասընթաց՝ «Հաղորդակցման գործիքները. հակագենդերային հոռետորաբանության դեմ պայքար» թեմայով, որին մասնակցում էին ՀՀ տարբեր մարզերից և Երևանից 18-30 տարեկան Տրանս ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչներ:

Դասընթացի նպատակն էր խթանել Տրանս ԼԳԲԻՔ երիտասարդ ակտիվիստների ներգրվածության մակարդակը հակագենդերային հոռետորաբանության դեմ պայքարելու համար ադվոկացիոն ծրագրեր իրականացնելու գործում:

Հաղորդակցության և ջատագովության ոլորտի հրավիրյալ մասնագետները դասընթացի ընթացքում բանախոսությամբ հանդես եկան այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են.

Հաղորդակցության առանցքային տարրերը և հաղորդակցության դերը:
Հաղորդակցման գործընթացը և հաղորդակցության տեսակները:
Արդյունավետ հաղորդակցության սկզբունքները:
Հաղորդակցման խոչընդոտները:
Հարաբերությունների ստեղծում, վստահության ձևավորում, ազդեցություն:
Հաղորդակցման էթիկետ, դրական կերպարի ստեղծում:
Ջատագովություն (ադվոկացիա). ի՞նչ է ջատագովությունը, ի՞նչ քայլեր են անհրաժեշտ ադվոկացիա իրականացնելու համար. հիմնախնդրի բացահայտում, պլանավորում, մոբիլիզացում և գնահատում:
Խնդրի սահմանում և վերլուծություն:
Ռազմավարության, մարտավարության և գործիքների մշակում:
Համայնքային մոբիլիզացիա, ցանցերի ստեղծում և շահերի պաշտպանություն:
Ադվոկացիոն ծրագրի մշակում:
Լրատվամիջոցների և որոշումներ կայացնողների հետ արդյունավետ հաղորդակցման ծրագրի մշակում:

SUPPORTED BY ILGA EUROPE

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Դասընթացավարների կողմից թեմաների ամբողջական ներկայացումից հետո Տրանս ԼԳԲԻՔ երիտասարդ ակտիվիստները ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ կատարեցին գործնական աշխատանքներ, քննարկեցին իրավիճակներ (օրինակ՝ առցանց հարթակում և առօրյա կյանքում իրենց նկատմամբ կիրառվող ատելության խոսքն ինչպես հասարակության լայն շերտերի, այնպես էլ լրատվամիջոցների ներկայացուցիչների և պաշտոնյաների կողմից), խոսեցին իրենց առջև ծառացած մարտահրավերներից, խտրականության դեպքերից ու դրանց նվազեցման համար համապատասխան լուծումներ առաջարկեցին:

Ի թիվս դասընթացի թեմաների, անդրադարձ կատարվեց նաև Տրանս ԼԳԲԻՔ համայնքի անդամների միջև հետագա համագործակցությանը, մշակվեց ճանապարհային քարտեզ, ըստ որի նախատեսվում է հակագենդերային հոետորաբանության և ատելության խոսքի նվազեցմանն ուղղված իրազեկման արշավներ և ակցիաներ կազմակերպել հասարակական վայրերում, կազմակերպություններում և կրթական հաստատություններում:

Մասնակիցներից Կուկա Կասյանի կարծիքով Հայաստանում տրանսգենդեր անձանց իրավունքների հետ կապված խնդիրները ավելի շատ արմատացած, կարծրատիպային և ավանդույթային, քան իրավական բնույթ ունեն, և դրանց դեմ պայքարելու համար պետք է հնարավորինս կարողանալ ազդել տրանսֆոբ մարդկանց մտածողության վրա, համայնքի անդամներին անհրաժեշտ է կրթվել և տրանսգենդեր անձանց վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն տարածել քաղաքացիների շրջանում, ինչի համար նա այս տեսակ միջոցառումները բավականին կարևոր և արդյունավետ է համարում: Տրանսգենդեր ակտիվիստ Մոնիկա Սարկիսյանը նշեց, որ կարծիքների փոխանակման շնորհիվ հնարավոր եղավ հետագա գործողությունների իրատեսական պլան մշակել, իսկ Վիվիեն Բաբայանն ընդգծեց, որ արդեն մի քանի ամիս է, ինչ զբաղվում է սոցիալական մեդիայում տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության խոսքի վերաբերյալ տվյալների հավաքագրմամբ և վստահ է, որ դասընթացավարների ու ակտիվիստների համատեղ ջանքերով վերջապես հնարավորություն կունենա ատելության խոսքը և համայնքի մասին սուտ տեղեկատվությունը նվազեցնելուն ուղղված կոնկրետ քայլեր ձեռնարկել:

Նշենք, որ դասընթացն իրականացվել է «Հայաստանում հակագենդերային և հակատրանս հոետորաբանության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում՝ ԻԼԳԱ Եվրոպայի ֆինանսական աջակցությամբ:

ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի թիրախային խմբերին արագ արձագանքման օգնության ֆոնդի և AFEW ինթերնեյշնլի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ անվճար, անանուն և արագ հետազոտություն տրանս անձանց և սեքս աշխատողների շրջանում՝ նվազեցնելու ՄԻԱՎ-ի տարածումը:
Յուրաքանչյուր ամիս աութրիչ աշխատակիցներն անցնում են մոնիթորինգ և գնահատում՝ կատարած հետազոտությունների վերաբերյալ:
Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿի աութրիչ աշխատակիցները հասնում են այնպիսի թիրախային խմբերին, որոնք երբևիցէ չեն հետազոտվել այլ կազմակերպությունների կողմից:

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՌԱՍԻԶՄԻ և ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀՆԱՁՆԱԺՈՂՈՎԻ (ՌԱԵՀ) ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ՍԵՄԻՆԱՐԻՆ:

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը ս.թ. հոկտեմբերի տասնութին ելույթ ունեցավ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հնաձնաժողովի (ՌԱԵՀ) կողմից կազմակերպված ամենամյա սեմինարին՝ խոսելով Հայաստանում և տարածաշրջանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ շարունակական անհանդուրժողականության մթնոլորտի և ՀԿ-ի կատարած աշխատանքների մասին:
Հանդիպման նպատակն էր միավորել ուժերը՝ խթանելու և պաշտպանելու ԼԳԲՏԻ անձանց իրավունքները:
Այն հնարավորություն տվեց մասնակիցներին քննարկել և բարձրաձայնել մի շարք խնդիրների մասին, որոնց բախվում են ԼԳԲՏԻ անձինք, ինչպես նաև հետագայում ձևավորել նոր համագործակցություն՝ հանուն ԼԳԲՏԻ անձանց բարօրության և անվտանգության:
Կից ներկայացնում ենք Լիլիթ Մարտիրոսյանի ելույթի տեքստը:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ «ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԸ

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն, լինելով տարածաշրջանում տրանս անձանց և սեքս աշխատողների համար գործող իրավապաշտպան առաջին համայնքահեն և առաջատար հասարակական կազմակերպություններից, զբաղվում է սեքս աշխատող անձանց իրավունքների պաշտպանությամբ, նրանց կրթությամբ, սոցիալական բարեկեցության ապահովմամբ, մտավոր և ֆիզիկական անվտանգությամբ և պաշտպանությամբ, ինչպես նաև բարձրացնում է հանրային իրազեկվածության մակարդակը տրանս անձանց և սեքս աշխատողների վերաբերյալ՝ նվազեցնելով նրանց նկատմամբ խարանը և խտրականությունը:

Սույն թվականի հոկտեմբերի 1-ից 3-ն ընկած ժամանակահատվածում ՀԿ-ն կազմակերպեց դասընթաց՝ «Առաջնորդության հմտություններ և ակտիվ քաղաքացիական ներգրավվածություն» թեմայով, որին մասնակցում էին ՀՀ տարբեր մարզերից և Երևանից սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչներ:

Դասընթացի նպատակն էր խթանել սեքս աշխատող անձանց կարողությունների զարգացումը և հզորացումը, բարելավել նրանց ներգրավվածության մակարդակը սոցիալ-մշակութային և քաղաքացիական կյանքում, ապահովել նրանց անվտանգությունը ինչպես ընտանիքում, այնպես էլ հասարակությունում: Բացի այդ, հանդիպումը նպատակաուղղված էր նպաստելու սեքս աշխատող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և կրում էր ուսուցողական բնույթ:

Հանդիպման թեմաներն էին.

- Սեքս աշխատող անձանց նկատմամբ խարանը և խտրականությունը
- Սեքս աշխատանքը և դրա իրավական կարգավորումները ՀՀ-ում
- Մտավոր և ֆիզիկական անվտանգություն
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ և սեռավարակներ
- Առաջնորդության հմտություններ
- Քաղաքացիական ներգրավվածություն
- Համայնքային մոբիլիզացիա
- Լրատվամիջոցների հետ աշխատանք
- Սեքս աշխատող անձանց դրական իմիջի ստեղծում:

Հանդիպման առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը: Նա ողջունեց բոլոր մասնակիցներին, իր երախտագիտության խոսքն ուղղեց նրանց հանդիպմանը մասնակցություն ունենալու համար, վստահեցրեց, որ սա կլինի նրանց լավագույն դասընթացներից մեկը, բոլորը կստանան նոր գիտելիքներ և կանցկացնեն հիանալի ժամանակ:

Այնուհետև մասնակիցները ծանոթացան միմյանց հետ, որին էլ հաջորդեց եռօրյա դասընթացի ողջ ընթացքի համար կանոնների սահմանումները:

Առաջին օրը նվիրված էր առաջնորդության հմտությունների ձևավորմանը և քաղաքացիական ներգրավվածության խթանմանը: Մասնակիցները ձեռք բերեցին իրենց համայնքներում առաջնորդ դառնալու համար անհրաժեշտ կարողությունները: Բաժանվելով խմբերի՝ նրանք կատարեցին գործնական աշխատանքներ առաջնորդության և ջատագովության թեմաներով: Փորձագետը խոսեց սեքս աշխատողների՝ քաղաքացիական կյանքում ակտիվ ներգրավվվածություն ունենալու կարևորության և հնարավորությունների մասին, ընդգծեց դրական իմիջի ստեղծման անհրաժեշտությունը և կիսվեց լրատվամիջոցների հետ աշխատանքի իր փորձով: Մասնակիցներն առաջարկեցին իրենց ստացած գիտելիքներն օգտագործել համայնքի այն անդամների շրջանում, որոք հանդիպմանը ներկա չէին:

Դասընթացի երկրորդ օրը տեղի ունեցավ պանելային քննարկում. 8 սեքս աշխատողներ պատմեցին իրենց՝ որպես Տրանսգենդեր և սեքս աշխատող անձանց նկատմամբ տեղի ունեցած բազում բռնությունների, խարանի ու խտրականության մասին, և թե ինչպես են կարողացել պաշտպանվել ու գոյատևել կյանքի դժվար պայմաններում: Դասընթացավարի հետ նրանք քննարկեցին մտավոր և ֆիզիկական անվտանգության թեման, խոսեցին, թե ինչ խոչընդոտների են հանդիպել առողջապահության ոլորտում, ընտանիքում, փողոցում և առհասարակ կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես նաև անդրադարձան Հայաստանի Հանրապետությունում սեքս աշխատանքով զբաղվելու բարդություններին, խնդիրներին, վտանգներին: Սեքս աշխատող անձինք նաև պատասխանեցին դասընթացավարների հարցերին, որոնք ի պատասխան իրենց պատրաստակամությունը հայտնեցին կանգնելու սեքս աշխատող անձանց կողքին՝ նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար:

Երրորդ օրվա ընթացքում մասնակիցներն անդրադարձան ՀՀ-ում սեքս աշխատանքի իրավական կարգավորմանը և իրենց անվտանգությանը: Նրանք կիսվեցին անհատական պատմություններով՝ խոսելով իրենց նկատմամբ իրականացված հանցագործությունների մասին, նկարագրելով, թե ինչպես են դիմակայում բռնության դեպքերին և ատելության քարոզին ՀՀ-ում: Բոլոր մասնակիցները ձեռք բերեցին ինքնապաշտպանվելու վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Ամփոփելով դասընթացի երեք օրերը՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, դասընթացը ֆինանսավորող կազմակերպությանը, դասընթացավարներին, ԻԿ ԻՀԿ ողջ անձնակազմին և նշեց, որ նմանատիպ հանդիպումները շարունակական բնույթ են կրելու, քանի որ դրանք չափազանց կարևոր են սեքս աշխատող անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Նա նաև նշեց, որ հանդիպումները լավագույն հարթակներ են մեզ համար, որտեղ մենք համախմբվում ենք, քննարկում մեր կարիքները և խնդիրները՝ դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելով. «մենք շարունակելու ենք համախմբել սեքս աշխատող անձանց և նպաստել նրանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ հանուն նրանց բարեկեցության ու բարօրության, հանուն նրանց իրավունքների պաշտպանության»:

Երրորդ օրվա ավարտին մասնակիցներին հանձնվեցին դասընթացի մասնակցության հավաստագրեր:

Դասընթացն իրականացվել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից՝ «Կարմիր հովանոց» ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:



ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 11 880 770

Copyright All Rights Reserved for Right Side NGO.